ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2024Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

zinapah.am

Բովանդակություն

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը

Կառավարման մարմինը և գործադիր թիմը
Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
Գլխավոր գործադիր տնօրենի խոսքը
Գործառնությունները 2017 – 2024թթ. ՍԳ
Շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 3-րդ եռամսյակ
Նվիրատվությունները 2017 – 2024թթ. 3-րդ եռամսյակ
Շահառուներին միտված սոցիալական ծրագրեր և համագործակցություն
Զարգացման ուղին դեպի անկախություն

2023թ. աուդիտորական հաշվետվություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆՎՈՐՈՒԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Մարիանա Հարությունյան
Ծրագրերի ղեկավար

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Lorem ipsum

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ՁԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ՁԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ.՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ՁԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ՁԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ՁԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ՁԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամտից)
- Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից
- ՁԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված եկամտից

ՁԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ՁԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ՁԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ՁԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ամփոփելով 2024թ. 3-րդ եռամսյակը՝ ուրախ եմ ձեզ հետ կիսվել ԶԻՆԱՊԱՀԻ գրանցած առաջընթացով և ազդեցությամբ: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է մնալ նվիրված իր առաքելությանը՝ ապահովել կյանքը և առողջությունը հանուն հայրենիքի զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների ֆինանսական բարեկեցությունը և արժանապատիվ կյանքը: Մենք ապրում ենք անկայուն ժամանակաշրջանում, երբ ԶԻՆԱՊԱՀԻ դերն առավել քան երբևէ կարևոր է: Մենք ապահովում ենք ոչ միայն ֆինանսական հատուցումներ, այլ նաև փոխանցում ենք հույս և ապահովության զգացողություն այն զինծառայողներին և նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են իրենց կյանքը և առողջությունը հանուն ապագա սերունդների խաղաղության և անվտանգության:

2017-2024թ. 3-րդ եռամսյակի դրությամբ ԶԻՆԱՊԱՀԸ **5,469** զինծառայողների տրամադրել է **102 միլիարդ** ՀՀ դրամի ֆինանսական հատուցումներ, որոնք բաղկացած են միանվագ հատուցման գումարից և ամսական հատուցման գումարից: ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի շուրջ **173 միլիարդ** ՀՀ դրամը ձևավորվել է պարտադիր վճարներից, **23 միլիարդը**՝ ակտիվների կառավարումից և **9.5 միլիարդը**՝ նվիրատվություններից:

Այս ամենը հնարավոր է դարձել Հայաստանի և համայն աշխարհի մեծահոգի նվիրատուների, ինչպես նաև մեր քաղաքացիների համատեղ ջանքերի շնորհիվ, ում պարտադիր վճարների տեսքով մասնակցությունը ապահովում է ազգի պահապանների ամուր թիկունքը: Իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում բոլոր աջակիցներին, կամավորներին և գործընկերներին, ովքեր ներդրում ունեն ԶԻՆԱՊԱՀԻ առաքելության իրականացման գործին: Ձեր միասնականությունը ոգևորում է մեզ բարելավել մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կյանքը:

Այս հաշվետվության մեջ մենք ներառել ենք կարևոր ֆինանսական տեղեկատվություն, ինչպես նաև մեր շահառուների ակնկալիքների վրա հիմնված կառավարման փորձառության շարունակական ամրապնդման ուղիները: Թափանցիկությունը, հաշվետվողականությունը և բարեվարքությունը շարունակում են մնալ ԶԻՆԱՊԱՀԻ կարևոր արժեքները: Մենք շարունակաբար հրապարակում ենք գործառնության և աուդիտի մանրամասն հաշվետվությունները, որպեսզի դուք վստահ լինեք, որ ԶԻՆԱՊԱՀԻ յուրաքանչյուր լումա օգտագործվում է խելամիտ և արդյունավետ կերպով:

Նայելով ապագային՝ ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը մնում է անփոփոխ: Մենք հավատարիմ ենք աջակցելու մեր զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական և բարոյական ինտեգրմանը և վստահեցնում ենք, որ մեր զինծառայողների զոհողությունները արժանավայել են գնահատվելու գալիք տարիների ընթացքում:

Շնորհակալություն ձեր վստահության և ԶԻՆԱՊԱՀԸ մեր ազգային հպարտության և միասնության խորհրդանիշ դարձնելու գործում ձեր շարունակական աջակցության համար:

Միասին զինվորիս կողքին...

Խորին հարգանքով՝

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ՋԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. Սահող Գնահատականով (ՍԳ)

ՋԻՆԱՊԱՀՆ ունի ճկուն ֆինանսական կառուցվածք: Հիմնական եկամուտների հոսքը ապահովում են կայուն աճող պարտադիր դրոշմանիշային վճարները և ակտիվների կառավարման եկամուտը: Ակտիվների կառավարումից ստացվող եկամուտը նույնպես աճում է զգալի տեմպով՝ դառնալով հիմնական եկամտի աղբյուր, և հավանաբար ընթացս կդառնա ռազմավարական կարևոր բաղադրիչ:

Հատուցումները ձևավորում են ամենամեծ ծախսային հոդվածը՝ ուղղելով ՋԻՆԱՊԱՀԻ ռեսուրսների զգալի մասն իր առաքելության իրականացմանը: Չնայած վարչական և գործառնական ծախսերի աճին՝ դրանք մնում են վերահսկելի, իսկ կապիտալ ծախսերը զգալիորեն նվազում են:

Պարտադիր վճարները ձևավորում են ընդհանուր եկամուտի զգալի մասը և կայուն աճ են գրանցում՝ 2017-2019թթ. ընթացքում 21.78 միլիարդ ՀՀ դրամից հասնելով 44.51 միլիարդ ՀՀ դրամի 2024թ.: 2023-2024թթ. պարտադիր վճարներից ձևավորվող եկամուտը աճել է 3%-ով և ձևավորել 2024թ. ընդհանուր եկամուտի 83%-ը, որը թեթևակի անկում է 2023թ. 87%-ի համեմատ, ինչը վկայում է եկամտի որոշակի դիվերսիֆիկացման մասին:

Նվիրատվությունները վերելք են գրանցել 2020թ.՝ հասնելով 6.98 միլիարդ ՀՀ դրամի, որից հետո զգալի անկում են գրանցել: Կանխատեսվում է, որ 2024թ. նվիրատվությունները կկազմեն 243 միլիոն ՀՀ դրամ՝ գրանցելով 11% անկում 2023թ. համեմատ: Ակնկալվում է, որ նվիրատվություններից գոյացած եկամտի մասնաբաժինը կլինի չնչին, ընդամենը 0.45% 2024թ.: Մյուս կողմից, ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 48% աճ է գրանցել՝ կազմելով 8.81 միլիարդ ՀՀ դրամ 2024թ. նախորդ տարվա 5.94 միլիարդ ՀՀ դրամի համեմատ: Արդյունքում 2024թ. ակտիվների կառավարումից ստացված եկամտի մասնաբաժինը ընդհանուր եկամտի մեջ կազմում է 16% 2023թ. 12%-ի համեմատ:
2024թ. 3-րդ եռամսյակի դրությամբ, ինչպես նաև 2024թ. տարեվերջի սահող գնահատականներով (ՍԳ) կանխատեսվում է, որ ՋԻՆԱՊԱՀԸ կգրանցի եկամտի աճ մոտ 8%-ով նախորդ տարվա համեմատ, որը կկազմի 53.69 միլիարդ ՀՀ դրամ և կպահպանի աճող միտումը:

Հատուցումները կազմում են ընդհանուր ծախսերի զգալի մասը, և կանխատեսվում է, որ 2024թ. կաճեն 41%-ով նախորդ տարվա համեմատությամբ՝ կազմելով ընդհանուր ծախսերի 98%-ը: Կանխատեսվում է նաև, որ վարչական ծախսերը կաճեն 17%-ով 2024թ. նախորդ տարվա համեմատությամբ, սակայն չեն գերազանցի ընդհանուր ծախսերի 1%-ը: Կապիտալ ծախսերը զգալիորեն կնվազեն և 2021թ. 105 միլիոն ՀՀ դրամի համեմատությամբ կկազմեն 12 միլիոն ՀՀ դրամ 2024թ., ինչը 74% անկում է նախորդ տարվա համեմատ, և կկազմեն ընդհանուր ծախսերի 0.05%՝ ազդարարելով ենթակառուցվածքներում և ակտիվներում ներդրումների կրճատման մասին:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2019	2020	2021	2022	2023	2024 ՍԳ	2017-2024 ՍԳ	2024թ. 2023-ի համեմատ	% հարաբ 2023	% հարաբ 2024
Եկամուտ պարտադիր վճարներից	21,779	9,134	29,072	35,274	43,199	44,513	182,973	3%	87%	83%
Նվիրատվություններ	305	6,976	1,290	508	273	243	9,595	-11%	1%	0.45%
Կամուրջ*	-	1,000	1,510	239	237	126	3,112	-47%	0.5%	0.2%
ՀՀԿԲ**	-	-	301	-	-	-	301	0%	0%	0%
Ակտիվների կառավարում	2,545	2,425	1,841	3,256	5,944	8,808	24,820	48%	12%	16%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	0.24	0.19	0.26	0.75	1	183.8%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**24,629**	**19,535**	**34,015**	**39,278**	**49,654**	**53,691**	**220,802**	**8%**	**100%**	**100%**
Հատուցումներ	1,635	8,030	44,484	16,878	14,747	20,859	106,632	41%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	246	267	314	827	17%	2%	1%
Կապիտալ ծախսեր	-		105	3	45	12	165	-74%	0.3%	0.05%
Գործառնական ծախսեր	0.32	-	149	21	25	39	236	55%	0.2%	0.2%
Այլ	-	-	-	-	-	-	-		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,635**	**8,030**	**44,738**	**17,148**	**15,084**	**21,224**	**107,860**	**41%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՋԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 45 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով իրավասու շահառուներին և ներկայացվում են փոխհատուցման ծախսերում:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. 3-րդ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2024թթ. 3-րդ եռամսյակի և տարեվերջյան սահող գնահատականով եկամուտը և ծախսերը արտացոլված են գրաֆիկում՝ ըստ տարիների:

2024թ. նախորդ տարվա համեմատությամբ ակնկալվում է ընդհանուր եկամուտի 8% աճ՝ կազմելով 53,691 միլիարդ ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2023թ. համեմատությամբ նույնպես կաճեն 41%-ով՝ հիմնականում պայմանավորված հատուցման պարտավորությունների աճով՝ կազմելով 21,224 միլիարդ ՀՀ դրամ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017 – 2024թթ. եկամուտը ծախսերի համեմատ. ՍԳ ՄԼՐԴ ՀՀ դրամ



ՁԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2024ԹԹ. 3-ՐԴ ԵՌ

2024թ. ՁԻՆԱՊԱՀԻ եկամուտը նախորդ տարվա համեմատ ըստ կանխատեսման պետք է աճեր 8%-ով, սակայն 2024թ. 3-րդ եռամսյակում իրական աճը 13% է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար: Գնահատվում է, որ ընդհանուր ծախսերը կաճեն 41%-ով: 2024թ. 3-րդ եռամսյակում դրանք արդեն աճել են 36%-ով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

Ակնկալվում է, որ պարտադիր վճարները 2024թ. կաճեն 3%-ով նախորդ տարվա համեմատ: 2024թ. 3-րդ եռամսյակում պարտադիր վճարները գրանցել են 9% աճ 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ և 2024թ. 3-րդ եռամսյակում շարունակում են կազմել ընդհանուր եկամուտների ամենամեծ մասնաբաժինը՝ շուրջ 85%: Կանխատեսվում է, որ 2024թ. նվիրատվությունները կնվազեն 11%-ով նախորդ տարվա համեմատ: 2024թ. 3-րդ եռամսյակում նվիրատվությունները գրանցել են 72% նվազում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ ցուցաբերելով անկումային միտում: Ակնկալվում է, որ ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը զգալի աճ կգրանցի՝ շուրջ 48% տարեկան, ինչպես նաև 2023թ. 3-րդ և 2024թ. 3-րդ եռամսյակների համեմատությամբ: Ակտիվների կառավարումից ձևավորված եկամուտը կազմում է ընդհանուր եկամուտի 15%-ը 2024թ. 3-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 11%-ի համեմատ:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա գնահատվում է, որ 2024թ. հատուցումները կաճեն 41%-ով նախորդ տարվա համեմատությամբ և 37%-ով 2024թ. 3-րդ եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ կազմելով ընդհանուր ծախսերի 98%-ը 2024թ. 3-րդ եռամսյակի դրությամբ: Համաձայն կանխատեսման՝ վարչական ծախսերը պետք է աճեին 17%-ով 2024թ. նախորդ տարվա համեմատությամբ, սակայն 2024թ. 3-րդ եռամսյակի դրությամբ գրանցել են 7% նվազում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

ՄԼՆ ԴՐԱՄ	ԵՌ1 2024	ԵՌ2 2024	ԵՌ3 2024	ԵՌ4 2024 ՍԳ	2023 ԵՌ1-4	2024 ԵՌ1-4	2024-ը 2023-ի համեմատ	ԵՌ3 '24 ԵՌ3 '23 համեմատ	% հարաբ ԵՌ3 2023	% հարաբ ԵՌ3 2024
(ԴՐԱՄ)										
Եկամուտ պարտադիր վճարներից	11,272	8,969	13,812	10,460	43,199	44,513	3%	9%	88%	85%
Նվիրատվություններ	88	27	23	106	273	243	-11%	-72%	1%	0%
Կամուրջ*	15	15	28	68	237	126	-47%	-16%	0%	0%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	-	-	-	0%	0%
Ակտիվների կառավարում	2,019	2,182	2,389	2,219	5,944	8,808	48%	48%	11%	15%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0	1	-	-	1	148%		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**13,394**	**11,193**	**16,252**	**12,852**	**49,654**	**53,691**	**8%**	**13%**	**100%**	**100%**
Հատուցումներ	5,788	5,359	4,916	4,797	14,747	20,859	41%	37%	98%	98%
Վարչ. ծախսեր	60	83	74	97	267	314	17%	-7%	2%	1%
Կապ. ծախսեր	1	5	1	5	45	12	-74%	-	0%	0%
Գործառնական ծախսեր	7	16	7	9	25	39	55%	-5%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**5,856**	**5,463**	**4,997**	**4,908**	**15,084**	**21,224**	**41%**	**36%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ՁԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 42 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2024թ. ՍԳ համեմատությունը
2017-2024թթ. հետ. ամփոփ պատկերը

- Պարտադիր վճարների 24%-ը կստացվի 2024թ.
- Ակնկալվում է, որ նվիրատվությունների 3%-ը կստացվի 2024թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 35%-ը կձևավորվի 2024թ.
- Հատուցումների 20%-ը կվճարվի 2024թ.

ՄԼՆ ԴՐԱՄ	2023	2024	2017-2024	% հարաբ 2024
Պարտադիր վճարներ	43,199	44,513	182,973	24%
Նվիրատվություններ	273	243	9,595	3%
Ակտիվների կառավարում	5,944	8,808	24,820	35%
Հատուցումներ	14,747	20,859	106,630	20%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 3-րդ ԵՌ

2017-2024թթ. 3-րդ ԵՌ. ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,469** շահառուների:

2024թ. 3-րդ եռամսյակում հատուցվել են **35 նոր դեպքեր՝ 2023թ. նույն ժամանակահատվածի 17 դեպքերի փոխարեն:**

2024թ. 3-րդ եռամսյակի 35 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին խումբ	2-րդ խումբ
13	14	0	8

2017 - 2024ԹԹ. 3-ՐԴ ԵՌ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,469 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2017-2024թթ. 3-րդ ԵՌ

2017-2024թթ. 3-րդ եռամսյակի կտրվածքով **5,469 դեպքերով հատուցումները** գրաֆիկում բաշխված են ըստ շահառուների դասակարգման: **43%**-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **30%**-ը զորահավաքային շարքայիններ, սպաներ, **19%**-ը պայմանագրային շարքայիններ և **8%**-ը կամավորներ:

2017-2024ԹԹ. 3-ՐԴ ԵՌ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,469ԴԵՊՔՈՎ





2017-2024ԹԹ. 3-ՐԴ ԵՌ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

35

Նոր հատուցման դեպքեր 2024թ. 3-րդ եռամսյակում և 5,469 դեպքեր 2017-2024թթ. 3-րդ ԵՌ

4.9 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2024թ. 3-րդ ԵՌ

102 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2024թթ. 3-րդ ԵՌ դրությամբ՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

9%

պարտադիր վճարների աճ 2024թ. 3-րդ ԵՌ 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2024թթ. 3-րդ ԵՌ դրությամբ

2017-2024թթ. 3-րդ ԵՌ. դրությամբ ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները կազմում են շուրջ 9.5 միլիարդ ՀՀ դրամ: Նվիրատվությունների ընդհանուր թիվը կազմում է 93,5 հազար՝ միջին նվիրատվության գումարը՝ 101,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ:

2024թ. 1-3 եռամսյակների նվիրատվությունների գումարը համեմատած 2023թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել են -35%-ով: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2024թթ. 1-3 ԵՌ նվիրատվությունները ըստ արժույթի									
Currency' 000	2017-2019	2020	2021	2022	2023	2023 ԵՌ1-3	2024 ԵՌ1-3	2017-2024 ԵՌ3	ԵՌ3 2024-Ը ԵՌ3 2023-Ի ՀԱՄԵՄԱՏ
ՀՀ դրամ	296,495	4,380,043	739,093	301,333	173,750	138,650	65,542	5,956,256	-53%
Դոլար	7	4.826	879	492	233	166	180	6,617	8%
Ռուբլի	162	114,908	6,517	455	1	1	2	122,045	123%
Եվրո	1	797	122	34	20	15	13	988	-12%
2017-2024թթ. 1-3 ԵՌ նվիրատվությունները ՀՀ դրամով									
	304,611	6,975,856	1,290,065	508,062	273,307	210,673	137,320	9,489,221	-35%
Նվիրատվությունների քանակ	2,807	41,769	25,976	12,665	5,209	4,025	3,348	93,503	-17%
Նվիրատվությունների միջին չափը	390	167	50	40	52	52	41	101	-22%

2017-2024թթ. ՍԳ նվիրատվությունները



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 3-րդ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է համագործակցությունը տարբեր հիմնադրամների, պետական ու ոչ պետական, բարեգործական կառույցների հետ՝ նպատակ ունենալով համախմբել կառույցներին զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ և նպաստել շահառուների սոցիալական, ֆիզիկական ու հոգեբանական բարեկեցությանը: Արդյունքում ընդլայնվել է համագործակիցների շրջանակը, ստորագրվել են համագործակցության նոր հուշագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ: Այդ նպատակով մշակվել է սոցիալական ծրագրերի հայեցակարգի նախագիծը, որի հիման վրա կազմվել է 2025թ. սոցիալական ծրագրերի պլանն ու առաջնահերթությունները: Տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ պետական և հասարակական կազմակերպությունների, հիմնադրամերի հետ՝ կրթական, տնտեսական ինտեգրման, բիզնեսի խթանման և այլ ոլորտներում համագործակցություն հիմնելու և պլանավորվող աշխատանքների/նախագծերի համակարգումն ապահովելու նպատակով:

Համագործակցություն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) հետ/Նաիրի ճամբար

ՀԲԸՄ-ի Նաիրի ամառային ճամբարը 4-րդ տարին անընդմեջ իր հյուրընկալ դռներն է բացում պատերազմի փորձությունը վերապրած երեխաների առջև: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի ճամբարը կազմակերպվեց Հանքավանում և 3 հերթափոխով ընդունեց շուրջ 620 երեխա: Ճամբարին մասնակցեցին ԶԻՆԱՊԱՀԻ շահառու զինծառայողների 7-13 տարեկան երեխաները:

«Նաիրի» ճամբարն առաջարկում է միջավայր, որտեղ երեխաները վայելում են իրենց ամառային արձակուրդները, սովորում են ազգային երգն ու պարը, զարգացնում իրենց ստեղծագործական ունակությունները, մասնակցում սպորտային և զարգացնող խաղերի, հաղթահարում անձնական դժվարությունները՝ հոգեբանական աջակցության թերապիաների միջոցով:

Համագործակցություն ՀԱՅՈՐԴԻ բարեգործական հիմնադրամի հետ / ՀԱՅՈՐԴԻ ճամբար

Այս տարի **ՀԱՅՈՐԴԻ** ճամբարը կրում էր փոխգնդապետ Արցախի Ազգային հերոս Հայկ Կիրակոսյանի անունը: Ճամբարն անցկացվեց Հանքավանում հուլիսի 29-ից օգոստոսի 25-ը, որին մասնակցեցին ԶԻՆԱՊԱՀԻ շահառու 2016-2023թթ. զոհված/անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների 6-14 տարեկան թվով 300 երեխաներ: Մասնակցության հնարավորություն ստացան նաև Արցախից բռնի տեղահանված, պայթյունի հետևանքով տուժած մեր հայրենակիցների երեխաները: Այս տարի ևս ճամբարի ջոկատավարները և ողջ անձնակազմը, զոհված/անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների կանայք, մայրերն ու քույրերն էին և վիրավորում ստացած զինծառայողները:

Ճամբարի ընթացում իրականացվել են կինոդիտումներ, ճամփորդություններ, արտ թերապիաներ, հոգեբանական պարապմունքներ, ազգային երգ ու պար, համերգներ: Համերգների օրերը համարվում էին նաև տեսակցության օրեր մայրիկների հետ, ինչին մայրիկները սիրով միանում էին:

Համագործակցություն ՀԵՄԱ ՀԿ-ի հետ

ՀԵՄԱ ՀԿ-ն նախաձեռնել էր վիրավոր և հաշմանդամ զինվորների և կամավորականների համար «Տեղեկատվական Տեխնոլոգիաների ուսուցման դասընթացներ» ծրագիր՝ 44-օրյա պատերազմի հետևանքով զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների կրթական մակարդակը բարձրացնելու և վերջիններիս բարձր վճարովի աշխատատեղեր ապահովելու նպատակով:

Վերոնշյալ ծրագրով անցկացվել են մաթեմատիկայի, բարձրագույն մաթեմատիկայի ուսուցում, ծրագրավորման հիմունքների, մեքենայական ու արհեստական բանականության, WEB և որակի ապահովման ծրագրավորման դասընթացներ, ինչպես նաև լրացուցիչ օժանդակ առարկաներ, ինչպիսիք են անգլերեն լեզվի և վիճակագրության ու անալիզի հիմունքներ դասընթացներ: ԶԻՆԱՊԱՀԻ զինհաշմանդամություն ունեցող շահառուներին ծրագրին մասնակից դարձնելու նպատակով ՀԵՄԱ-ն և ԶԻՆԱՊԱՀԸ մեկնարկեցին համագործակցություն: Արդյունքում ծրագրին գրանցվեց ԶԻՆԱՊԱՀԻ 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամ շահառուներ:

Համագործակցություն Այրուձի մանկական ակումբի հետ

Այս տարի ևս **ԶԻՆԱՊԱՀԸ և Այրուձի** մանկական ակումբը շարունակեցին համագործակցությունը՝ Այրուձի ամենամյա ամառային ճամբարին ԶԻՆԱՊԱՀԻ երեխա շահառուներին մասնակից դարձնելու նպատակով: Այրուձի մանկական ակումբը կրկին մեկնարկել էր իր **Թերապիաներ պատերազմից տուժած երեխաների համար** հատուկ ծրագրով, որին մասնակցեցին ԶԻՆԱՊԱՀԻ շահառու զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների երեխաներ:

Ակումբի թիմի աջակցությամբ երեխաներին ընձեռնվեց հնարավորություն լինել բնությանն ու կենդանիներին մոտ, դուրս գալ հետպատերազմյան սթրեսից:

Ծրագիրն իր մեջ ներառում էր շփում կենդանիների հետ, լողավազանային խաղեր, կավագործության դասընթացներ, երեկոյան ժամանց (կիթառ, երգ) խարույկի շուրջ, ինչպես նաև մեկ օր քայլարշավ:

6-օրյա հանգստի ընթացքում երեխաները նաև հնարավորություն ստացան մասնակցելու ձիավարության դասընթացին:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 3-րդ ԵՌ

Համագործակցություն 8 18 Քոնսալթինգ մարդկային ռեսուրսների կառավարման խորհրդատվական ընկերության հետ

8 18 Քոնսալթինգը ՀԲԸՄ պատվիրակմամբ «Սովորի՛ր և վաստակի՛ր. Արցախ» ծրագրի շրջանակներում ԶԻՆԱՊԱՀԻ արցախցի շահառուներին աջակցելու նպատակով մեկնարկեց նախագիծ, ինչը հնարավորություն կտա մեր Արցախցի հայրենակիցներին ձեռք բերել կամ զարգացնել անհրաժեշտ հմտություններ՝ Հայաստանի աշխատաշուկայում աշխատանք գտնելու և նոր կապեր հաստատելու հարցում: Ծրագրի մեկնարկի մասին արցախցի շահառուներին տեղեկացնելու և մասնակից դարձնելու նպատակով նկարագրական հայտարարություն տեղադրվեց zinhub.am առցանց հարթակում, որը տարածվեց նաև ԶԻՆԱՊԱՀԻ տեղեկատվական հարթակների միջոցով: Սեպտեմբերի վերջի դրությամբ գրանցվածների թիվը կազմում է 308:

Համագործակցություն Իմփաքթ ՀԱԲԻ հետ Իմփաքթ ՀԱԲԸ

Մեկնարկել է Սոցիալական ձեռներեցությանն աջակցող ծրագիր, որը կենտրոնացած է կարողությունների զարգացման, գիտելիքների փոխանակման և թվայնացման վրա: Ծրագիրը թիրախավորում է Արցախից բռնի տեղահանված ՓՄՁ-ներին և բիզնեսի սեփականատերերին, որոնք նպատակ ունեն վերահաստատել իրենց բիզնեսները Հայաստանում: Ծրագրում ԶԻՆԱՊԱՀԻ արցախցի շահառուներին մասնակից դարձնելու նպատակով նկարագրական հայտարարություն տեղադրվեց zinhub.am առցանց հարթակում, որի մասին տեղեկությունը շրջանառվեց շահառուների շրջանում: Հաշվետու ժամանակահատվածում ծրագրին գրանցվել է 50 շահառու: Ծրագիրն ավարտողները հնարավորություն կունենան նաև գրանցվելու Իմփաքթ ՀԱԲ Երևանի հատուկ շրջանավարտների անդամակցության համար, ինչը նրանց հնարավորություն կտա պահպանել երկարաժամկետ հարաբերություններ և օգտվել Իմփաքթ ՀԱԲ Երևանի գործընկերական ցանցից և լրացուցիչ առաջարկներից:

Ֆինանսական գրագիտության դասընթացներ

ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնությամբ Արեն Մեհրաբյան բարեգործական հիմնադրամը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) պատվիրակմամբ «Սովորի՛ր և վաստակի՛ր. Արցախ» ծրագրի շրջանակներում հուլիսի 22-ին առցանց ձևաչափով կազմակերպեց ֆինանսական գրագիտության դասընթաց Արցախից տեղահանված հայրենակիցների համար, որին մասնակցել են նաև ԶԻՆԱՊԱՀԻ արցախցի շահառուները: Դասընթացի նպատակն էր բարձրացնել ֆինանսական գրագիտությունը, ծանոթացնել անձնական/ընտանեկան ֆինանսների կառավարման մեթոդներին:

Դասընթացի շրջանակներում ԶԻՆԱՊԱՀԻ սոցիալական ծրագրեր համակարգող Արփինե Զարգարյանի կողմից ներկայացվեց նաև տեղեկատվություն հիմնադրամի կողմից բացվող հատուկ հաշիվների, հիմնադրամի համագործակցող բանկերի վերաբերյալ:

ZINHUB

2024թ. փետրվարից ZINHUB առցանց հարթակում առկա են գրանցված 32 համագործակցող գործընկեր կազմակերպություններ, որոնք իրականացնում են տարբեր անվճար ծրագրեր մեր շահառուների լայն շրջանակների համար: Հարթակում փուլային տեղադրվում են տարբեր դասընթացներ, աշխատանքի հայտարարություններ, հոգեբանական/բժշկական այլ ծառայություններ՝ դեղորայքի տրամադրման, պրոթեզավորման, ատամնաբուժական ծառայությունների, ինչպես նաև տարբեր խմբակների, ճամբարների մասին հայտարարություններ:

Ծարունակական ընթացիկ աշխատանքներ են իրականացվում ավելի շատ կազմակերպություններ ներգրավվելու և ավելի շատ հայտարարություններ տեղադրելու, շահառուներին իրազեկելու ուղղությամբ: Արդյունքում շահառուները կարողանում են մուտք գործել հարթակ, տեղեկանալ և անմիջապես գրանցվել տարբեր դասընթացների, խմբակների, օգտվել այլ ծառայություններից:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Նորք տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ներկայացուցիչների հետ քննարկվել է ԶԻՆՀԱԲ առցանց հարթակի ինտեգրումը պետական e-work համակարգին, որը հնարավորություն կտա ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին ակտիվորեն ներգրավել առաջարկվող զբաղվածության հնարավորություններում:

Ներկայումս գործընկերների հետ ընթանում է e-work.am և zinhub.am հարթակների ինտեգրացիայի համար անհրաժեշտ լուծումների ուսումնասիրությունը՝ վերջնական բովանդակային կողմը հստակեցնելու և zinhub.am-ի ֆունկցիոնալ համակցումն իրականացնելու նպատակով:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվում է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմին՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով
- Գործառնական թիմ՝ 14 հոգուց բաղկացած անձնակազմ
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույցի հիմնական իրավասությունների և սոցիալական ծրագրերի վրա
- Անձնակազմի կատարողականի և գնահատման թվային Teamflect համակարգի իրագործում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գնումների կանոնակարգի ընդունում
- ԶԻՆԱՊԱՀԻ վերաբրենդավորման արշավների մեկնարկ
- ԶԻՆՀԱԲ հարթակի ներդրում
- 2023թ. աուդիտի ավարտ և հրապարակում

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայությունների նոր գործընկերոջ ընտրություն 2024թ.
- Հաճախորդների զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի և ենթակառուցվածքների մշակում
- Դրոշմանիշային վճարների վերադարձի գործընթացի ավտոմատացում և իրագործում
- Ֆինանսական ենթակառուցվածքի մշակում հատուցումների ծրագրի հենքով
- SS անվտանգության խոցելության գնահատում և ներթափանցման թեսթերի նախագծի իրականացում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը
- Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնակարգի մշակում
- Շահառուների՝ հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման ծրագիր
- 2008-2017թթ. ԶԻՆԱՊԱՀԻ հատուցումների միավորում ԶԻՆԱՊԱՀԻ համակարգում

ԶԻՆԱՊԱՀԻ 2023թ. աուդիտն իրականացրել է **Գրանթ Թորնթոն ՓԲԸ**-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ստորև ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ-ընթացիկ ակտիվներ			
Գույք և սարքավորում		94,691	126,849
Ոչ նյութական ակտիվներ		14,885	12,742
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	2,573,923	620,521
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	27,378,861	8,681,686
		30,062,360	9,441,798
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		28,617	7,459
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	42,579	1,215,099
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	44,710,738	32,674,544
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	5,519,741	2,389,638
		50,301,675	36,486,740
Ընդհանուր ակտիվներ		80,364,035	45,928,538
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	103,724,845	107,762,538
Վարձակալական պարտավորություններ		19,861	32,130
		103,744,706	107,794,668
Ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	13,101,671	13,314,038
Վարձակալական պարտավորություններ		23,561	27,415
Կրեդիտորական պարտքեր		14,948	14,536
		13,140,180	13,355,989
Զուտ ակտիվներ			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով		(27,357)	(57,586)
չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	8	(36,493,494)	(75,164,533)
(Կուտակված վնաս)/չբաշխված շահույթ		(36,620,851)	(75,222,119)
Ընդհանուր պարտավորություններ և զուտ ակտիվներ		80,364,035	45,928,538

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	43,709,476	36,021,512
Ֆինանսական եկամուտ	10	5,952,073	3,256,038
Այլ եկամուտ		697	188
		49,662,073	39,277,738
Ծախսեր			
Հատուցման ծախսեր		(3,436,956)	(12,983,465)
Աշխատակիցների նպաստներ		(132,110)	(118,480)
Մաշվածություն և ամորտիզացիա		(34,600)	(33,625)
Շահույթ/(վնաս) ակնկալվող վարկային կորուստների գծով			
պահուստի վերաչափումից	11	(228,394)	84,462
Ֆինանսական ծախսեր	12	(7,064,627)	(9,888,750)
Այլ ծախսեր		(94,772)	(83,551)
Զուտ վնաս փոխանակման տարբերություններից		252	(1,827)
		(10,991,207)	(23,025,237)
Տարվա արդյունք		38,671,039	16,252,502
Այլ համապարփակ եկամուտ			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս		32,521	(20,961)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(2,292)	(6,646)
Տարվա այլ համապարփակ վնաս		30,229	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		38,701,268	16,224,895

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**29,979**	**91,417,035**	**91,447,014**
Տարվա արդյունք	-	(16,252,502)	(16,252,502)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	(27,607)	-	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(27,607)	(16,252,502)	(16,224,895)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(57,586)**	**(75,164,533)**	**(75,222,119)**
Տարվա արդյունք	-	38,671,039	38,671,039
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	30,229	-	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	38,671,039	38,701,268
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,620,851)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամով	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	43,709,476	36,021,512
Տրամադրված հատուցումներ	(14,746,687)	(16,877,925)
Աշխատանքային ծախսեր	(99,729)	(82,302)
Այլ եկամուտ	340,809	56
Այլ ծախսեր	(513,676)	(147,024)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	28,690,193	18,914,317
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	-	
Հիմնական միջոցների ձեռքբերում	(59.908.431)	(2,530)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(1,997,423)	(25,975,000)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	30,000,000	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	1,267,377	4,370,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	4,944,405	1, 400,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	134,123	991,721
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	(25,559,949)	222,500
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագ.) զուտ դրամական միջոցներ		(18,993,309)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	3,130,244	(78,992)
Արտարժույթի ազդեցությունը կանխիկի վրա	(141)	(1,668)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	2,389,638	2,470,295
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	5,519,741	2,389,638

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ
սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք
զինվորներին ու նրանց ընտանիքներին,
ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց
կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և
կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ